ArmLur.am

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

20 նոյեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

161
(3011)

100 դրամ

I SSN 1829-2763
24161
9 771829 276006

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԹԵՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ. ԻՆՉ ԿՈՐՈՃՎԻ



«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թիմում իրավիճակը թեժ է ոչ միայն կառավարական ճյուղում, այլ նաեւ ՏԻՄ-ում:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նոյեմբերի 12-ին կայացած իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստում մի նոր սկանդալ է գրանցվել:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ երեքշաբթի օրը կայացած նիստում, որի ընթացքում Գյումրիում ստեղծված անիշխանության իրավիճակն է քննարկվել, Նիկոլ Փաշինյանը անակնկալ կերպով նիստին ներկա ՔՊ խմբակցության պատգամավոր, Գյումրու քաղաքապետի հավանական թեկնածու Կարեն Սարուխանյանին թմրանյութի թեստ հանձնելու է ուղարկել՝ իր համար վստահելի բժշկի եւ իր անվտանգության աշխատակցի ուղեկցությամբ:

Համաձայն «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝Սարուխանյանի հետազոտության արդյունքները դրական պատասխան են ցույց տվել, այսինքն՝արյան մեջ եղել է թմրանյութի առկայություն:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 10-ին հրապարակավ հայտնի դարձավ, որ թմրանյութ պահելու ու օգտագործելու կասկածանքով ձերբակալվել են ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Կարեն Սարուխանյանի քեռու որդին՝ Վարուժ Խոջումյանը եւ նրա ընկերը՝ Գյումրու ավագանու ՔՊ խմբակցության անդամ Պարգեւ Գեւորգյանը: Նշվում է, որ Կարեն Սարուխանյանի քեռու որդին՝ Վարուժ Խոջումյանը, «Գյումրի» ԲԿ-ի մանկական բաժանմունքի տնտեսական աշխատակիցն է, նաեւ Գյումրու ՔՊ տարածքային կազմակերպության խորհրդի անդամ. եւ նա, որպեսզի ՔՊ-ի վրա հետք չթողնի, օրերս հայտարարեց, թե դուրս է գալիս իշխող կուսակցությունից:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Կարեն Սարուխանյանը կրկին չհերքեց թմրանյութի թեստի դրական արդյունքի մասին լուրերը, բայց նաեւ չհաստատեց: Պատգամավորը կրկին հետաքրքրվում էր ՔՊ վարչությունից ստացված մեր տեղեկությունների աղբյուրից, սակայն չէր անհանգստանում սեփական հեղինակության համար:

Մեր ուղիղ հարցին. «Ձեր թեստի արդյունքները դրակա՞ն են եղել, թմրանյո՞ւթ եք օգտագործել», ՔՊ-ական պատգամավորը չհերքեց, հարցն անպատասխան թողեց՝ հետաքրքրվելով՝«փակ նիստից ո՞նց կարող եք դուք բաներ իմանալ»:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն, երբ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը կիրակի՝գիշերը, հասկացել է, որ պետք է հեռանա, պատրաստել է հրաժարականի իր տեքստը: Մինչեւ հրապարակելը՝ նա գիշերը հաղորդագրություններ է ուղարկել մի շարք դատավորների եւ ՍՄՍ-ով շնորհակալություն հայտնել համատեղ աշխատանքի համար: Իսկ արդեն առավոտ կանուխ՝դեռ աշխատանքային ժամը չսկսված, միանգամից հրապարակել է իր հրաժարականի տեքստն ու հրաժեշտ տվել բաղձալի պաշտոնին: Թեեւ նրան եւս, ըստ ամենայնի, կառավարության աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը զանգահարել եւ «գիշերային շնորհակալություն» է հայտնել համատեղ աշխատանքի համար:



Գրեթե բոլոր ՔՊ-ականներն իրենց իրականացրած հեղափոխությունից անմիջապես հետո ձեռք բերեցին մեկ եւ ավելի բնակարաններ: «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Արման Եղոյանի ներկայացրած հայտարարագիրը, արձանագրեց, որ այն բաղկացած է քաղաքացիական օրենսգրքի գրեթե բոլոր տեսակի գործարքներից. ՔՊ-ական պատգամավորը նվերներ է ստացել հարսանիքի հյուրերից, քրոջից, մորից, նա ստացել է նաեւ ժառանգություն, վարկ եւ այլ եկամուտներ: Սրանից ինչ եզրակացություն կանի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝սպասենք առաջիկայում, քանի որ իշխանականների գրեթե բոլոր հայտարարագրերի հիման վրա վարույթներ են հարուցվում, ապա կարճվում: Բայց մենք պետք է արձանագրենք, որ չկա մի ՔՊ-ական հայտարարատու պատգամավոր, որի բարեկեցությունը շեշտակի աճ չի գրանցել, այն դեպքում, երբ կենսաթոշակառուների համար արդեն 2-րդ տարին է ինչ գումար չկա բյուջեում, մինչ այդ էլ ավելացել էր ընդամենը ծիծաղելի 3 հազար դրամով: Ինչ վերաբերում է, տվյալ դեպքում, Եղոյանի եկամուտների աղբյուր հանդիսացող «հարսանիքի հյուրերին», ապա տեղեկացնենք մոլեռանդ հեղափոխականներին, որ նախկինների ժամանակ էլ էին «հյուրերը» նորապսակներին գումար, թանկարժեք նվերներ տալիս, ինչը մերժում էր Արման Եղոյանի հեղափոխական թիմը: Այս թեմային ի պատասխան՝ Արման Եղոյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց. «Դուք հարսանիք չե՞ք գնացել, դրանք մի քանի անձից տրված գումարներ են տարբեր քանակի՝մեկից 50 դոլար, մեկից 100 դոլար: Արդյունքում ձեւավորվել է 1 մլն 200 հազար դրամ»:

56-ամյա կնոջ մահից հետո «Արթկոսմեդ»-ը կրկին վերսկսել է վիրահատությունները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առողջապահության եւ աշխատանքի տեսչական մարմինը տեսչական գործողություններ չի իրականացրել նշված կլինիկայում, իսկ դեպքից անցել է մեկ ամիս: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 17-ի կառավարության նիստից հետո ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հայտարարեց, որ «Արթկոսմեդ»-ում տեսչական մարմինը ստուգումներ է իրականացնում: Նախարարը նշեց, որ ԱՆ-ն (առողջապահության նախարարություն) բժշկական հաստատություններում կամ էսթետիկ վիրաբուժության կլինիկաների լիցենզավորման ոլորտում ավելի խիստ պահանջների է դիմում: Եվ սա այն բանից հետո, երբ «Արթկոսմեդում» արդեն 2-րդ մահվան դեպքով վիրահատությունն է գրանցվում: Տեսչական մարմնի արված գործողությունների արդյունքը չերեւաց, քանի որ 1 ամիս անց այս կլինիկայի բժիշկ Արթուր Սարգսյանը կրկին անխոչընդոտ նույն վիրահատություններն է անում: Տեսչական մարմնից «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեցին, որ քայլեր ձեռնարկվել են, դրանք ընթացքի մեջ են: Մեկ այլ տեղեկությամբ՝ տեսչական մարմինը ստուգումներ չի անցկացնում, քանի որ «Արթկոսմեդ» կլինիկան 19-րդ պոլիկլինիկայից պետք է տեղափոխվի Կենտրոն վարչական շրջան: Հիշեցնենք, որ «Արթկոսմեդ» էսթետիկ վիրաբուժության կլինիկայում հոկտեմբերի 5-ին գրանցվել էր 56-ամյա կնոջ մահվան դեպք: Մահացողը 56-ամյա Ջաքել Կարապետյանն էր, որը Գերմանիայից էր եկել Հայաստան, դիմել պլաստիկ վիրահատության համար: Սովորաբար, բժշկական կենտրոնը պետք է պատշաճ վերակենդանացման բաժանմունք ունենա, որ հավանական խնդիրների դեպքում անմիջապես կարողանա կայունացնել բուժառուի վիճակը. «Արթկոսմեդ»-ում բուժառուի վիճակի վատթարացումից հետո վերջինիս ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխել են «Աստղիկ» ԲԿ: Սա կլինիկայում գրանցված արդեն երկրորդ մահվան դեպքն է պլաստիկ վիրահատության ընթացքում: Կլինիկայում գրանցված մահվան առաջին դեպքում քրեական վարույթը նախաձեռնվել էր 2023թ. հոկտեմբերի 20-ին:



ԶՐՈՒՅՑ

# ՓԱՇԻՆՅԱՆԸ ՌԵԲՐԵՆԴԻՆԳ ԱՐԵՑ ԵՎ ԵՐԿՈՒ ՀԱՐՑ ԼՈՒԾԵՑ

**Երկուշաբթիից սկսած՝ հայրենի գործադիրում պաշտոնանկությունների շքերթ էր:**



Հրաժարականի դիմումներ են ներկայացրել ՆԳ նախարար Վահե Ղազարյանը, ՔԿ ղեկավար Արգիշտի Քյարամյանը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը, ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը, ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը, ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը:

Թեմայի վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է քաղտեխնոլոգ Արմեն Բադալյանի հետ:

**-Պարո՛ն Բադալյան, Ձեր կարծիքով ի՞նչն է պաշտոնանկությունների շքերթի պատճառը: Ինչո՞ւ Նիկոլ Փաշինյանը, այն էլ ոչ աշխատանքային օրով, նման որոշումներ կայացրեց. ընդ որում, կարեւոր հաստիքներ զբաղեցնող պաշտոնյաներ հեռացան:**

-Փաշինյանն արեց, որպեսզի օրակարգ լրացնի, որպեսզի լրագրողները ոչ թե հարցնեն, թե հաջորդ բյուջեով սահմանված ի՞նչ զարգացումներ են լինելու, ինչո՞ւ է աշխատավարձը բարձրանալու կամ չբարձրանալու, այլ սկսեն հարցնել, թե ինչո՞ւ կիրակի օրով ազատվեցին պաշտոնյաները, չէ՞ր կարող արդյոք գնալ Վատիկան, գալ, հետո ազատումներն անել: Բայց խնդիրն այն էր, որ այդ ամենին պետք է ինտրիգային բնույթ տրվեր: Սափրվեց, նոր իմիջ ստեղծեց՝ազատվելով հնից, իր ելույթում նշեց, որ ինչ-որ համակարգային խնդիրներ են առաջացել, կարծես թե այդ համակարգը լրիվ այլ մարդ է կառուցել, եւ ինքը դրա հետ ոչ մի առնչություն չունի: Կարծես մոռանում է, կամ մոռանալու է տալիս՝ մտածելով, թե լրագրողներն իրեն տեսնելիս չեն հարցնելու. «Խնդիրներ ունեցող համակարգի ճարտարապետը Դուք էիք, վեց տարի կառուցում էիք, չտեսա՞ք խնդիրներ այսքան ժամանակ եւ հանկարծ հիմա՞ տեսաք: Դուք ղեկավարն եք, նրանք կատարողներն էին՝ պարզապես ներկարարները, խողովակ դնողները, սակայն հիմնական կառուցողն ու ճարտարապետը Դո՛ւք եք եղել»:

Հենց այս հարցերից խուսափելու համար էր այդ ինտրիգային իրավիճակը:

Սա, առաջին հերթին, օրակարգ ձեւավորելու գործընթաց է՝ հատկապես, որ խաղաղության պայմանագիրը տեղից չի շարժվում եւ Հայաստանում օրակարգ չկա, չկա տնտեսական զարգացում, կամ որեւէ նվաճում որեւէ բնագավառում: Պետք էր պարզապես օրակարգ ստեղծել՝ ձեռքի հետ մի քանի հարց լուծելով, եւ շահել ժամանակ՝մինչեւ տեսնենք, թե Թրամփը Հարավային Կովկասի հետ կապված ինչ քաղաքականություն է մշակելու:

Երկրորդը՝ իմիջի ռեբրենդինգ անելու քայլ էր: Միգուցե շատերն ասեն՝ ա՜յ, իրենք վատ մարդիկ էին, տեսեք՝գնացին:

**-Կարծում եք, որ դժգոհ չէ՞ր վերոնշյալ պաշտոնյաներից, զուտ օրակարգ ավելացնելու համա՞ր դա արեց:**

-Ես չեմ կարող ասել՝ դժգոհ էր, թե ոչ: Չեմ կարծում, թե իր ասածով պետք է շարժվեր: Նա այն մարդն է, որ ասում էր՝ Արցախը Հայաստան է, եւ վերջ: Ինքը այսպես երկու հարց է լուծում՝ձեւավորել օրակարգ՝մինչեւ Թրամփի քաղաքական դիրքորոշման հստակեցումը Հարավային կովկասի մասով եւ իմիջային ռեբրենդինգ է անում՝ տատանվողներից մի քանի տոկոսին իր կողմ քաշելու համար:

**-Պարո՛ն Բադալյան, մեկ ամիս չէին կարողանում արդարադատության նախարար ընտրել, հիմա ինչպե՞ս են համալրելու այս պաշտոնները:**

-Մտահոգվելու հարց չկա, կադրեր շատ ունեն եւ կնշանակեն: Մեկնումեկին կդնեն՝ անձնապես վարչապետին նվիրված մարդկանցից: Նրանց համար էական չէ կուսակցական կամ պրոֆեսիոնալ լինելը:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԼՈՒՐԵՐ

## ԱԴՐԲԵՋԱՆԸ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԿՍՏԵՂԾԻ՞

Եվրոպայի խորհրդի փորձագետների կարծիքով՝ Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների՝իրավունքներից օգտվելու հնարավորությունները պետք է բարելավվեն:

Այս մասին նշված է Եվրախորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի տարածած հաղորդագրության մեջ:

Կառույցի փորձագետներն անբավարար են համարել Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների իրավունքների լիարժեք եւ արդյունավետ հավասարությունը երաշխավորելու համար առկա պայմանները:

ԵԽ խորհրդատվական կոմիտեն իր զեկույցում շեշտել է, որ առաջին անգամ է գնահատում իրավիճակը Ղարաբաղի տարածաշրջանում եւ ընդգծել ղարաբաղյան հակամարտությանը հաջորդած իրավիճակի լուծման համար անհապաղ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Նշվում է, որ Լաչինի միջանցքի գրեթե տասը ամիս շրջափակումից, 2023 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի իշխանությունների ռազմական գործողությունից եւ միջանցքի անսպասելի վերաբացումից հետո ավելի քան 100 հազար հայեր լքել են տարածաշրջանը:

«Որպես անհապաղ գործողությունների հանձնարարական՝ Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ստեղծել քաղաքական, իրավական եւ գործնական պայմաններ, որոնք անհրաժեշտ են Ղարաբաղից տեղահանված հայերի անվտանգ, անխոչընդոտ եւ կայուն վերադարձի համար եւ ստեղծել սեփականության հարցերով զբաղվելու հատուկ մեխանիզմ: Իշխանություններին նաեւ խրախուսվում է գույքագրել, պաշտպանել եւ պահպանել հայկական բոլոր կրոնական եւ մշակութային վայրերն ու արտեֆակտները, ինչպես նաեւ հետաքննել տարածաշրջանում էթնիկ հայերի կողմից օգտագործվող պատմական եւ մշակութային հուշարձանների եւ գերեզմանոցների վանդալիզմի, ոչնչացման եւ փոփոխության բոլոր մեղադրանքները», - ասված է հաղորդագրության մեջ:

## ՏԿԵ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը նոր բացահայտումներ է արել տեղի ունեցած աղմկահարույց պաշտոնանկությունների պատճառների մասին:

Նա հայտարարել է՝ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի պաշտոնանկությունը կապված է եղել Շիրակի մարզի Բայանդուր գյուղի ճանապարհի ասֆալտապատման մասին վարչապետին սխալ զեկուցելու հետ, ինչի արդյունքում հենց Փաշինյանն էր հայտնվել քաղաքացիների քննադատությունների թիրախում:

Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանն ավելի վաղ սոցցանցում հրապարակում էր արել՝ հայտնելով, որ Բայանդուր գյուղի ճանապարհը վերանորոգված է, սակայն հենց այդ հրապարակման մեկնաբանություններում քաղաքացիները դժգոհել էին, որ ճանապարհն ամենեւին էլ չի վերանորոգվել:

«Հետո պարզվեց, որ քաղաքացիները ճիշտ էին, ճանապարհը գյուղի հատվածում կառուցված չէ», - հայտարարել է Իոաննիսյանը:

Կառավարության վերջին նիստին Նիկոլ Փաշինյանը այս ճանապարհի հետ կապված եւս դժգոհություն հայտնել էր, ասելով՝

«Շիրակի մարզ կատարած այցի ընթացքում ծրագիրն այնպես էր, որ Արմավիրով գնացինք, եւ մինչեւ մեր առաջին կետը հասնելը ճանապարհը ,կարելի է ասել, գրեթե իդեալական վիճակում էր: Եվ, երբ որ առաջին կետում կանգառ արեցինք, ես մեր գործընկերներին հարցրի, թե հիմա Արմավիրից մինչեւ Գյումրի էսպե՞ս է ճանապարհը եւ ստացա շատ պինդ դրական պատասխան»:

*Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՆՈՐ ԱՆԴԱՄ ՈՒՆԻ

Երեւանի ավագանին նոր անդամ ունի:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լուսինե Գեւորգյանին կփոխարինի նոր անդամ Արեգ Գեւորգյանը:

Հիշեցնենք՝ Լուսինե Գեւորգյանը հոկտեմբերի 31-ին նշանակվել էր Ջրասաշրջության կոմիտեի նախագահ:

## Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ՝ ԵԱՀԿ-ՈՒՄ ՀՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը հրամանագիր է ստորագրել Անդրանիկ Հովհաննիսյանին ԵԱՀԿ-ում ՀՀ առաքելության ղեկավար, Վիեննայում Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակում եւ այլ միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ նշանակելու մասին:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 14-րդ հոդվածի.

Ավստրիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանին նշանակել Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության առաքելության ղեկավար, Վիեննայում Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակում եւ այլ միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ (նստավայրը՝ Վիեննա)»,- ասված է հրամանագրում:

## ՄԵԿ ՏԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ՝ ԲԱՔՎԻՆ ԵՎ ԵՐԵՎԱՆԻՆ

Արդարադատության միջազգային դատարանը մեկ տարի՝մինչեւ 2025 թվականի նոյեմբերի 12-ը ժամանակ է տվել Բաքվին եւ Երեւանին ռասայական խտրականության դեպքերի վերաբերյալ փաստաթղթեր պատրաստելու համար: Այդ մասին նշված է դատարանի X-ի էջում:

Նշվում է, որ խոսքն այն փաստաթղթերի մասին է, որոնցում կողմերը պետք է հերքեն գործի էության վերաբերյալ հակառակ կողմի փաստարկները:

## ՄԱՄՈՒԼԻ ՆՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի հրամանով՝ Ծովինար Խաչատրյանը նշանակվել է արդարադատության նախարարի մամուլի քարտուղար: Ծովինար Խաչատրյանը հանրային կապերի ոլորտում ունի 20 տարուց ավելի աշխատանքային փորձ: Նա եղել է ԿԸՀ, ՄԻՊ, ՀՀ արդարադատության նախարարի, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի, ՀՀ ԱԺ նախագահի եւ մի շարք այլ գերատեսչությունների ղեկավարների մամուլի խոսնակը: Գիտությունների թեկնածու է: Այժմ դասավանդում է Վ. Բրյուսովի անվան համալսարանում:

## ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՄՆ նախագահական ընտրություններում հաղթած Դոնալդ Թրամփը հաստատել է երկրում արտակարգ դրություն մտցնելու եւ անօրինական միգրանտների զանգվածային արտաքսման ծրագրի իրագործման մասին տեղեկությունը

Ինչպես փոխանցում է ՌԻԱ Նովոստին, Դոնալդ Թրամփը «Truth Social» կայքէջում արձագանքելով Judicial Watch պահպանողական կազմակերպության ղեկավար Թոմ Ֆիթոնի հրապարակած համապատասխան տեղեկությանը, հաստատել է այն:

Թոմ Ֆիթոնը մասնավորապես հայտարարել է, որ Թրամփի վարչակազմը պատրաստվում է արտակարգ դրություն մտցնել եւ կօգտագործի ռազմական միջոցներ զանգվածային արտաքսման համար:

## ՍՈՎԻ, ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳԼՈԲԱԼ ԴԱՇԻՆՔ

Ավելի քան 80 երկիր է միացել սովի եւ աղքատության դեմ պայքարի գլոբալ դաշինքին:

Ինչպես հայտնում է ՏԱՍՍ-ը, այս մասին հայտարարել է Բրազիլիայի նախագահ Լուիս Ինասիո Լուլա դա Սիլվան՝ Ռիո դե Ժանեյրոյում G20-ի գագաթնաժողովի բացմանը:

«Արդեն միացել են 81 երկիր, 26 միջազգային կազմակերպություն, 9 ֆինանսական կազմակերպություն եւ 31 հասարակական եւ բարեգործական կազմակերպություն»,- մանրամասնել է նա:

Սովի եւ աղքատության դեմ պայքարի գլոբալ դաշինքը Բրազիլիայի առաջատար նախաձեռնությունն է, որն այս տարի նախագահում էր G20-ը: Դրա նպատակն է համախմբել հանրային քաղաքականության եւ տեխնոլոգիաների գործիքներն ու առաջարկները, որոնք արդյունավետություն են ցուցաբերել աշխարհում աղքատության եւ սովի նվազեցման գործում:

## ԱԴՐԲԵՋԱՆՆ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է ՌԱԶՄԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Ադրբեջանը շարունակում է ակտիվ ռազմականացումը եւ մինչեւ 2025 թվականը ավելացնում է ռազմական ծախսերը մինչեւ 4 միլիարդ 939 միլիոն դոլարով: Այդ մասին հայտնել են ադրբեջանական լրատվամիջոցները:

2025 թվականի ծախսերի կառուցվածքում 2 միլիարդ 665,2 միլիոն մանաթը նախատեսված է զինված ուժերին, 467 միլիոն 917 հազարը՝ազգային անվտանգությանը, 540 միլիոն 314 հազարը՝ սահմանային ծառայությանը: Նաեւ 4 մլրդ 717,4 մլն մանաթ է նախատեսված պաշտպանության եւ ազգային անվտանգության ոլորտին առնչվող այլ գործողությունների համար:

COP29-Ի ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

# ԲԱՔՈՒՆ ԽԵՂԱԹՅՈՒՐԵԼ Է ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

**Բաքվում հաղթանակ են որակել օրեր առաջ Եվրոպական խորհրդարանում COP-29-ի վերաբերյալ տեխնիկական բնույթ ունեցող բանաձեւի ընդունումը, որում, ի դեպ, Եվրոպական խորհրդարանը հերթական անգամ խիստ մտահոգություն է հայտնում Ադրբեջանում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ եւ հղում է կատարում մինչ այդ ընդունված բոլոր, այդ թվում՝ վերջին բանաձեւին, որի բովանդակությունը շատ կոշտ ու քննադատական էր:**




COP 29-ի վերաբերյալ բանաձեւը եւ դրանում տեղ գտած կետերն Ադրբեջանի փոխդեսպան Անար Շյուքյուրովը խեղաթյուրել է, ապատեղեկատվություն է տարածել դրա վերաբերյալ: Շյուքյուրովը X-ի իր միկրոբլոգում տարածել է, թե իբր Ֆրանսիան ներկայացնող եվրախորհրդարանական Նատալի Լուազոյի եւ մի շարք այլ պատգամավորների կողմից ներկայացված առաջարկները Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածի, Հայաստանի հանդեպ Ադրբեջանի շարունակական սպառնալիքների վերաբերյալ մերժվել են քվեարկության ժամանակ եւ տեղ չեն գտել բանաձեւում, մինչդեռ այդ առաջարկները լիագումար նիստում չեն քննարկվել եւ քվեարկության չեն դրվել:

Իրականում բանաձեւում տեղ են գտել կետեր, որոնցում հերթական անգամ պատգամավորները մտահոգություն են հայտնում եւ կոչ անում Ադրբեջանին հարգել բոլոր քաղբանտարկյալների, իրավապաշտպանների եւ լրագրողների իրավունքները, անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակել նրանց: Եվրոպական խորհրդարանը հաստատակամ է իր դիրքորոշման մեջ՝ Ադրբեջանի հետ բոլոր գործընկերային համաձայնագրերը պետք է պայմանավորվեն վերոնշյալով եւ երկրում մարդու իրավունքների ընդհանուր իրավիճակի բարելավմամբ:

Բանաձեւը նաեւ կոչ է արել ԵՄ-ին օգտագործել COP29-ը որպես առիթ, որպեսզի միջազգային հանրությունը հիշեցնի Ադրբեջանին իր միջազգային պարտավորությունների մասին եւ դատապարտի եւ բովանդակալից կերպով անդրադառնա Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտումներին:

COP29-ի վերաբերյալ ընդունված բանաձեւում խիստ մտահոգություն է հայտնվում, որ Ադրբեջանի բնապահպանության եւ բնական պաշարների նախարար Մուխթար Բաբաեւը, ով մինչեւ նախարար դառնալը 26 տարի աշխատել է Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային ընկերությունում, նշանակվել է COP29-ի նախագահ:

Բանաձեւը չի անտեսել նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարություններն այն մասին, որ նա շարունակելու է պաշտպանել հանածո վառելիքով հարուստ երկրների շահերը: Եվրոպական խորհրդարանի պատգամավորները կոչ են անում Եվրոպական հանձնաժողովին եւ ԵՄ անդամ պետություններին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ապահովելու, որ COP-ի առաջիկա նախագահությունները զերծ լինեն շահերի բախումից:

*Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ԻՆՉՈՒ ԲԱԴԱՍՅԱՆԸ ՀԵՌԱՑՎԵՑ ՊԱՇՏՈՆԻՑ

Երկուշաբթիից սկսած պաշտոնանկություններից ամենաանսպասելին թերեւս ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանինն էր:

Նիկոլ Փաշինյանը հաճախ է դժգոհել իրավապահ համակարգից, բայց երբեւէ հրապարակավ դժգոհություն չի հայտնել Ռուստամ Բադասյանի գլխավորած ՊԵԿ-ի աշխատանքից: Մեկ գիշերվա մեջ, սակայն, կառավարության աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի միջոցով նա պաշտոնանկ արեց Բադասյանին:

Իսկ ո՞րն է եղել այս անակնկալ պաշտոնանկության պատճառը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Ռուստամ Բադասյանի նշանակման առաջին իսկ օրվանից Նիկոլ Փաշինյանը նրա առջեւ խնդիր է դրել՝ հարկերի, տուգանքների, դատական ակտերի միջոցով «պետբյուջե լցնել»:

ՊԵԿ նախագահը, սակայն, Փաշինյանի այս առաջադրանքը չի կարողացել նրա սրտով կատարել:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ Նիկոլ Փաշինյանը վերջին շրջանում հարկային մուտքերի մասով դժգոհություններ է հնչեցրել, նաեւ մեղադրել է Բադասյանին, որ որեւէ նախկին պաշտոնյայից չի կարողացել գումար հետ վերցնել: Ռուստամ Բադասյանն էլ, իր հերթին, պատճառաբանել է, որ սոցիալական նման պայմաններում չի կարող այդքան բարձր հարկեր ու տուգանքներ կիրառել:

Արի ու տես, որ Փաշինյանին սա չի բավարարել ու որոշել է պաշտոնանկ անել Ռուստամ Բադասյանին:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

## ԱՇԽԱՏԵՑ ԸՆԴԱՄԵՆԸ 1,5 ԱՄԻՍ

Ազգային ժողովը շուրջ 30 հազար դոլար հատկացրեց ԱԺ սրճարան-բարին, որը անգամ 2 ամիս չկարողացավ ծառայել նպատակին:

Ազգային ժողովի բակում սրճարանի կառուցման մասին խոսակցություններ կային դեռ 2021 թվականի օգոստոսին: Հաջորդ տարի՝ 2022-ի դեկտեմբերին, «Հիպերնովա» ՍՊԸ-ի հետ շուրջ 4,7 մլն դրամի պայմանագիր կնքվեց, որով ընկերությունը պարտավորվել էր 20 աշխատանքային օրում բակում սալիկապատման աշխատանքներն ավարտել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը արձանագրել էր, որ ԱԺ աշխատակազմի հրահանգով՝ ձմռանը՝ շինարարության համար ոչ նպաստավոր եղանակին, սալիկապատվում էր բակը:

2023 թվականի սեպտեմբերին աշխատանքների 2-րդ փուլի մրցույթ է հայտարարվել: Ինչպես «Հետքը» գրել էր, մրցույթին մասնակցել է նաեւ «Հիպերնովա» ՍՊԸ-ն, սակայն հաղթող է ճանաչվել մեկ այլ ընկերություն՝ «Լիդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն. կնքվել էր շուրջ 1,9 մլն դրամի պայմանագիր:

Ազգային ժողովի եւ «Լիդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի միջեւ կնքված պայմանագիրը, սակայն, 2023-ի հոկտեմբերին ԱԺ աշխատակազմը միակողմանի լուծարել է. ըստ տեխնիկական բնութագրի եւ օրացուցային գրաֆիկի՝ ընկերությունը 30 օրում պիտի ավարտեր աշխատանքները, բայց, ինչպես նշված է պայմանագիրը լուծարելու հայտարարության մեջ, հոկտեմբերի 24-ի դրությամբ աշխատանքները սկսված չեն եղել:

Ազգային ժողովը, սրճարանի կառուցման խոչընդոտներն ու բարիկադները մի կերպ հաղթահարելով, հայտարարեց 3-րդ մրցույթը, եւ արդյունքում «Մարիամ Պետրոսյան Խաչատուրի» ԱՁ-ի հետ 2,3 մլն դրամի պայմանագիր կնքվեց:

Ազգային ժողովը 2024 թվականի հունիսի 21-ին 11,5 մլն դրամ՝ մոտ 30 հազար դոլար արժեքով պայմանագիր է կնքել «Արմպրոդուկտ» ՍՊԸ-ի հետ՝ սրճարան կառուցելու նպատակով:

30 հազար դոլար արժողությամբ այս սրճարանը անգամ 2 ամիս չգործեց: Սրճարանը, թեեւ նախատեսված էր բոլորի համար, սակայն քչերը հասցրին լինել այնտեղ:

Հենց սրճարանի բացման եւ ԱԺ նոր նստաշրջանի մեկնարկին «Ժողովուրդ» օրաթերթը հարցումների շարք էր արել, որտեղ պատգամավորները գոհունակություն էին հայտնում, թե որքան լավ է ԱԺ-ում բացօթյա սրճարան ունենալը: ՔՊ-ականներից շատերն էլ հավաստիացնում էին, որ սրճարանում «Կասկադի գները չեն»: Սակայն այս վայելքը երկար չտեւեց:

*Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻԿՆԱՊԱՀԻ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ

# ԻՆՉՊԵՍ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

**Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում Նիկոլ Փաշինյանի ուղղությամբ խնձոր նետելու գործով հարցաքննության է հրավիրվել նրա թիկնապահ Գրիգոր Մանուկյանը: «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել Փաշինյանի թիկնապահի ցուցմունքն այն մասին, թե ինչ է պատմել նա քննչական կոմիտեի քննիչներին:**



Մանուկյանն իր ցուցմունքում հայտնել է, որ աշխատում է ՀՀ ՊՊԾ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ 2-րդ բաժանմունքում՝ որպես ավագ թիկնապահ: 2024 թվականի օգոստոսի 23-ին՝ժամը 19:35-ի սահմաններում, ՀՀ վարչապետը գտնվել է Ռուբինյանց 2 շենքում, ինքը նույնպես գտնվել է Ռուբինյանց 2 հասցեի շենքի բակում եւ իրականացրել է նշված շենքի պահպանությունը. երբ ՀՀ վարչապետը վերոնշյալ շենքից դուրս է եկել եւ մոտենալիս է եղել մեքենային, ինքը կանգնած է եղել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին սպասարկող եւ ուղեկցող մեքենաների մեջտեղում: Այդ ժամանակ նկատել է, որ ինչ-որ իր օդի մեջ շարժվում է դեպի իրենց: Նշված իրը հարվածել է իրենցից մի քանի մետր հեռավորության վրա գտնվող մի քաղաքացու մեքենայի, որից հետո իրենց ձախակողման հատվածում այդ իրը վայր է ընկել:

Արդյունքում՝Նիկոլ Փաշինյանի թիկնապահ Գրիգոր Մանուկյանին դատարանը ծանուցում է ուղարկել, որպեսզի վերջինս ներկայանա՝ցուցմունք տալու:

Հիշեցնենք, որ այս տարվա օգոստոսի 23-ին՝ երեկոյան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռուբինյանց 2/2 հասցե էր գնացել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ իր հորաքրոջն ու դստերը տեսակցության: Հանդիպումը ավարտելուց հետո, երբ շենքից դուրս էր եկել, դիմացի շենքի 9-րդ հարկից քաղաքացին խնձոր էր նետել Փաշինյանի ուղղությամբ: Նիկոլ Փաշինյանն ու վերջինիս պահակախումբը ենթադրել էին, որ իրենց ուղղությամբ նռնակ է նետվել, եւ անմիջապես պառկել էին գետնին: Իրավապահները օրեր շարունակ Ռուբինյանց 2/2 շենքում խուզարկություններ էին անում, փնտրում այդ տեսակի խնձոր մարդկանց բնակարաններում:

Ի վերջո, խնձորը նետելու կասկածանքով, ձերբակալվեց 71-ամյա արցախցի Ալբերտ Առստամյանը:

Ալբերտ Առստամյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու համար. նրա նկատմամբ ընտրվել է «բացակայելու արգելք» խափանման միջոցը: ՀՀ քննչական կոմիտեն որոշում է կայացրել գործով նախաքննության ավարտ հայտարարել ու գործը ուղարկել է դատարան»:

«Ժողովուրդ» օրաթերթը դատարանում զրուցել էր 71-ամյա արցախցի տղամարդու հետ, ռով իր քայլի վերաբերյալ մեկնաբանեց՝լավ եմ արել:

Թե ինչով կավարտվի այս պատմությունը՝ կիմանանք հետեւելով քննության ընացքին:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ԿԳ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Հրայր Ռուդոլֆի Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պաշտոնատար անձ, ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ, կաշառք տվողի օգտին, իր լիազորությունների շրջանակում ապօրինի գործողություն կատարելու համար, կաշառք է ստացել:

Նվեր Հայսերի Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա անձին իր օգտին գործողություն կատարելու համար տվել է կաշառք, ինչպես նաեւ իր ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ նպաստել է կաշառք տվողի եւ ստացողի միջեւ կաշառքի, կաշառքի առարկայի շուրջ համաձայնության գալուն եւ կաշառքի առարկան փոխանցել է պաշտոնատար անձին:

Անժելա Սամվելի Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր օգտին գործողություն կատարելու համար պաշտոնատար անձին միջնորդի միջոցով տվել է կաշառք:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*



## ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԵՐԸ՝ ԿՐԻՄԻՆԱԼԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Փարաքարի ՔՊ-ական գյուղապետ Լյուդվիգ Գյուլնազարյանը հարցաքննվել է:

Նկատենք, որ սա առաջին դեպքը չէ, որ Փարաքարի ՔՊ-ական գյուղապետերը հայտնվում են կրիմինալի կիզակետում: Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը գիշերային ակումբում «կռիվ կինո» է սարքել. նա նախկինում ազատազրկված է եղել: Վերջինիս պաշտոնից ազատեցին ու կալանավորեցին՝ արդյունքում գյուղապապետ նշանակելով ՔՊ-ական Լյուդվիգ Գյուլնազարյանին, ով հերթական անգամ կրիմինալի կիզակետում է: Այս պահին աղմկահարույց կրակոցներով որեւէ անձ կալանավորված չէ:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՑՎԵԼ Է ԵՎՍ ԵՐԵՔ ԱՄՍՈՎ

Հակակոռուպցիոն դատարանն անփոփոխ է թողել Հայաստանի Հանրապետական կուսակցության փոխնախագահ Արմեն Աշոտյանի խափանման միջոց տնային կալանքը: Դատարանը որոշել է եւս երեք ամսով երկարացնել տնային կալանքի ժամկետը:

Արմեն Աշոտյանը տնային կալանքի տակ է քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող՝ «Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում կատարված առերեւույթ չարաշահումներին վերաբերող քրեական վարույթի շրջանակում:

Արմեն Աշոտյանը մեղադրվում է պաշտոնեական դիրքի չարաշահման եւ փողերի լվացման համար, որն առաջացրել է ծանր հետեւանքներ:

## Ե. ՔՈՉԱՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՑ ԱՆՀԵՏԱՑԵԼ ԵՆ ՆԿԱՐՉԻ 7 ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երվանդ Քոչարի թանգարանից անհետացել են նկարչի 7 ստեղծագործություններ՝ մոտ 500.000 դոլար արժողության: Նման հայտարարությամբ հանդես է եկել «Քոչար» մշակութային հիմնադրամը:

«Նոյեմբերի 20-ին՝ ժամը 12:00-ին, IBIS հյուրանոցի ԿԱՐԻՆ սրահում (հասցեն՝Հյուսիսային պողոտա 5/1) Երվանդ Քոչարի որդին՝ կինոռեժիսոր Ռուբեն Քոչարը եւ փաստաբան Տիգրան Աթանեսյանը հրավիրում են ձեզ՝ ներկայացնելու փաստեր:

Այդ մասին ահազանգվել է նաեւ ՀՀ կառավարությանը, այժմ գործը ՀՀ քննչական կոմիտեում է:

Կասկածներ կան նաեւ թանգարանում գտնվող պետական գույք հանդիսացող ստեղծագործությունների բնօրինակ լինելու, ինչպես նաեւ ապօրինի գործարքների հետ կապված:

Երվանդ Քոչարի ժառանգությունը վտանգված է, Հայաստանի պետությունը կարող է կանգնել փաստի առաջ», - ասված է տարածած հայտարարության մեջ:

## ԿԱՇԱՌՔ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Արեն Ծերունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավոր, Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԿԴ/0155/01/15 քրեական գործով ամբաստանյալ, պատժից խուսափելու կամ ազատազրկման ձեւի հետ չկապված այլ պատժամիջոցով դատապարտվելու նպատակով, 2016 թվականի փետրվար ամսին առաջարկել է ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի աշխատակիցներ Գագիկ Մաթեւոսյանին եւ Կարո Հովհաննիսյանին 8.000-10.000 ԱՄՆ դոլարի դիմաց միջնորդել թիվ ԵԿԴ/0155/01/15 քրեական գործը քննող դատավոր Ա. Բեկթաշյանին՝ բարենպաստ դատական ակտի կայացումն ապահովելու համար:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 18-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 93 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՊԱՏԵՐԱԶՄԻՑ 4 ՏԱՐԻ ԱՆՑ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԱՆՏԵՂՅԱԿ Է

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումով՝2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին հարցրել ենք, թե 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում Տավուշի մարզի քանի՞ բնակիչ է զոհվել, քանի՞սն է համարվում անհետ կորած, գերի: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզի համայնքների զոհված զինծառայողների թվաքանակի վերաբերյալ տեղեկության հավաքագրում մարզպետի աշխատակազմի կողմից չի իրականացվել՝նման գործառույթ չունենալու հիմքով: Անհրաժեշտ է խնդիրը ներկայացնել համապատասխան լիազոր մարմնին՝ ՀՀ պաշտպանության նախարարություն»: Հայկ Ղալումյանը անհայտ պատճառով ժամկետային զինծառայություն չի անցել, 1990-ականների ազատամարտին չի մասնակցել: 2020 թ. հոկտեմբերի 21-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը դիմեց բոլոր հայ տղամարդկանց՝նրանց կոչ անելով զենք վերցնել եւ մեկնել Արցախ: Առաջիններից մեկն արձագանքեց նրա հարսանիքի քավոր, այդ ժամանակ Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Հայկ Ղալումյանը: Վերջինս հետեւյալ կոչով դիմեց իր հայրենակիցներին. «Հայրենիքի պաշտպանության սրբազան առաքելության համար ստեղծվում է «Իջեւան» կամավորական ջոկատ: հայրենիքի առջեւ իմ սուրբ պարտքը կատարելու համար առաջինն եմ կամավորագրվում այս ջոկատին: Կոչ եմ անում բոլորիդ համախմբվել եւ միասին կերտել մեր նորօրյա հաղթանակը: Վստահ եղեք, որ մենք առաջնագիծ ենք մեկնում մեր վերջնական ու անշրջելի հաղթանակն ամրագրելու համար»: Հավաքագրվեց «Իջեւան» կամավորական ջոկատը մոտ մեկ շաբաթ անտառներում մարզվելուց հետո ոչ Արցախ մեկնեց, ոչ էլ՝ Տավուշի սահմանագոտի: Այդ ջոկատի անդամները մի քանի ամսվա աշխատավարձ ստացան: 44-օրյա պատերազմից ավելի քան 4 տարի անց Տավուշի մարզպետը անտեղյակ է պատերազմում զոհված, անհետ կորած, գերի ընկած տավուշցիների թվից եւ այդ առթիվ առաջարկում է դիմել ՀՀ պաշտպանության նախարարություն

## ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՋՐՀԵՂԵՂԻ՞

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին նոյեմբերի 7-ին հարց ենք ուղղել, թե 2025 թվականի պետբյուջեով նախատեսվա՞ծ են Դեբեդ, Աղստեւ գետերի ափերի ամրացման աշխատանքներ, եթե այո, որքա՞ն գումար է նախատեսված այդ նպատակով: Մարզպետարանից պատասխանել են. «Դեբեդ եւ Աղստեւ գետերի ափերի ամրացման նպատակով նախատեսված գումարի չափը դեռեւս հաստատված չէ»: Այս տարվա մայիսի 27-ի ջրհեղեղը Լոռու եւ Տավուշի մարզերում 4 մարդու զոհվելու, նյութական մեծ վնասների պատճառ եղավ: Փոխանակ Դեբեդ, Աղստեւ գետի ափերը հրատապ կերպով ամրացնեն՝ սպասում են նոր ջրհեղեղի՞:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

# ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ Է

**Նոյեմբերի 13-ից 15-ը Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը, փոխնախագահ Վրեժ Շառոյանը (Սիրիա), գործկոմի անդամ Ավո Թոքատլյանը (Արգենտինա) եւ Ուրուգվայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Մարիամ Գեւորգյանը հանդիպումներ ունեցան Ուրուգվայի հայ համայնքի, Հ.Մ.Ը.Մ.-ի, Հ.Մ.Մ-ի, Բարեգործական միության եւ Եկեղեցու ներկայացուցիչների հետ: Քննարկվեց Համահայկական խաղերին ուրուգվահայ համայնքի մասնակցության հարցը, որը վերջին տարիներին բավական պասիվ էր: Արդյունքում՝ միաձայն լիազորեցին դեսպանին ընտրելու այն անձնավորությանը, ով կհամակարգի աշխատանքները, եւ համայնքը լիարժեք կմասնակցի 2027թ.-ի ամառային 9-րդ խաղերին:**



Այնուհետեւ, Համահայկական մարզական ավանի շինարարության, հետագա աշխատանքներին ներգրավելու եւ համագործակցության առումով չափազանց արդյունավետ հանդիպում կայացավ «Քորփորացիոն Ամերիկա» ընկերության գլխավոր տնօրեն Մարտին Էռնեկյանի հետ: Պրն. Էռնեկյանը շնորհավորեց Իշխան Զաքարյանին Համահայկական «Վիլիջ»-ի գաղափարի համար՝ խոստանալով, որ կիրահանգի հայաստանյան իր կառույցներին կապ հաստատել կոմիտեի հետ համագործակցության նպատակով:

Նոյեմբերի 16-ից պատվիրակության այցը շարունակվեց Արգենտինայում: Հայ բարեգործական միության կենտրոնական գրասենյակում հավաքվել էին արգենտինահայ համայնքի բոլոր ներկայացուցիչները: Իշխան Զաքարյանը շնորհակալություն հայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի, բարեգործականի, Հ.Մ.Մ-ի. եւ եկեղեցու ներկայացուցիչներին համահայկական խաղերում միասնականության եւ լավ աշխատանքի համար: «Դուք համահայկական խաղերին մասնակցում եք մեծ թիմով՝ կազմակերպված ու ակտիվ: Շնորհակալ եմ բոլորիդ կատարված աշխատանքի համար: Շնորհակալ եմ գործկոմի անդամ Ավո Թոքատլյանին աշխատանքները լավ կազմակերպելու համար», - նշեց կոմիտեի նախագահը: Այնուհետեւ մասնակիցները դիտեցին Համահայկական մարզական ավանի գաղափարի մասին պատմող տեսանյութը:

«Համահայկական մարզական ավանը լինելու է Հայաստան-Սփյուռք երիտասարդության տունը Մայր Հայրենիքում, ուր բոլորը շուրջ մեկ ամիս ապրելու են միասին՝մեկ հարկի տակ, մեկ ընտանիքի պես»,- իր ելույթում ասաց Իշխան Զաքարյանը՝ ավելացնելով, որ ՀՀ նախագահ Վ. Խաչատուրյանի եւ Համահայկական խաղերի կառավարական կազմկոմիտեի նախագահ Ա. Հարությունյանի հետ շատ մանրամասն քննարկել են այդ գաղափարը, որն արժանացել է հավանության: Ներկաները բազմաթիվ հարցեր ուղղեցին պրն. Զաքարյանին, որոնց տրվեցին սպառիչ եւ գոհացուցիչ պատասխաններ: Արգենտինահայ համայնքը սիրով համաձայնեց մասնակցելու «Վիլիջ»-ի կառուցման համար նախատեսվող միջոցառումներին:

Նոյեմբերի 17-ին պատվիրակության անդամները այցելեցին Հ.Մ.Ը.Մ. կենտրոնական գրասենյակ, ծանոթացան մարզական կառույցներին, լսեցին խաղերի ծրագրում նոր մարզաձեւեր ընդգրկելու առաջարկներ: Իշխան Զաքարյանը գրառում կատարեց Հ.Մ.Ը.Մ. կենտրոնական գրասենյակի պատվավոր հյուրերի գրքում:

Նոյեմբերի 18-ից 20-ը նախատեսվում են հանդիպումներ արգենտինահայ գործարար շրջանակների հետ, որից հետո պատվիրակությունը կմեկնի Բրազիլիա:

*Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի պատվիրակություն*

ԿԳՄՍ ՆԱԽԿԻՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

# ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՄԲԻՇՆԵՐԻՆ

**ԿԳՄՍ նախկին փոխնախարար Գրիշա Մաքսիմի Թամրազյանը հայտարարություն է տարածել.**

«Վերջին երեք տարիներին ըմբշամարտի թիմի հետ ներկա եմ գտնվել գրեթե բոլոր խոշոր մրցաշարերին, այդ թվում՝ աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններին, ինչպես նաեւ Փարիզի Օլիմպիական խաղերին: Տղաների հաղթանակները միշտ էլ մեծ հպարտություն են պարգեւում, սակայն առանձնակի ոգեւորությամբ ենք ընդունում թուրք եւ ադրբեջանցի ըմբիշների դեմ տարած հաղթանակները:

Նախապես իմանալով, որ այս տարվա ըմբշամարտի Բանակայինների աշխարհի առաջնությունը տեղի է ունենալու Հայաստանում՝ ըմբշամարտիկների մոտ մեծ ոգեւորություն էր առաջացել, որ իրենց հաղթանակներով կարող էին բարձրացնել բանակի ոգին եւ տոն պարգեւել մեր հայրենակիցներին:

Թեեւ մյուս թիմերի կազմերում կան մարզիկներ, ովքեր չեն գտնվում ժամկետային ծառայության մեջ (ինչը օրենքով արգելված չէ), մեր պատասխանատուները մինչեւ մրցաշարը հստակեցրեցին, որ այս տարի Հայաստանի թիմում լինելու են միայն ժամկետային զինծառայողներ: Առաջին հիասթափությունը մարզիկների մոտ եղավ այդ պատասխանը լսելուց հետո:

Տարիներ շարունակ բոլոր երկրները Բանակայինների առաջնությանը մասնակցելու եւ հաղթանակներ գրանցելու նպատակով պայմանագրային հիմունքներով ներգրավում են իրենց առաջատար մարզիկներին:

Երկրորդ հիասթափությունն էլ եղավ նոյեմբերի 15-ին, երբ ժամկետային զինծառայության մեջ գտնվող մեր չեմպիոններին, առանց որեւէ ողջամիտ բացատրության, եւս արգելվեց մասնակցել առաջնությանը: Ի դեպ, Թուրքիան Հայաստանում տեղի ունեցող առաջնությանը ներկայանում իր «առաջին կազմով»: Թուրքիայի կազմում են աշխարհի ու Եվրոպայի երկու չեմպիոն (մեկը գործող), Եվրոպայի երկու չեմպիոն եւ աշխարհի ու Եվրոպայի առաջնությունների բազմակի մրցանակակիրներ:

Կարեւոր է, որ մեր չեմպիոնները բարձրաձայնեցին, որ իրենց չեն ընդգրկել հավաքականի կազմում եւ հասարակությունը տեղեկացավ այս ամենի մասին: Վստահ եմ «առաջին կազմով» ներկայանալու պարագայում Հայաստանի հավաքականը վստահ հաղթանակ կտաներ: Մնում է հասկանալ, թե չեմպիոնների փոխարեն ո՞ւր են տանում մեր երիտասարդ ըմբիշներին, ծրագրավորված պարտությա՞ն...

Տղե՛րք, գլուխներդ բարձր, դուք գորգում բազմիցս ապացուցել եք՝ դուք հաղթող եք ու Հայաստանն էլի դառնալու է հաղթողների երկիր»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

## ԱՄԵՆԱՑԱԾՐ ԳՆԱՃԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է

Հայաստանում գնանկումը փոխարինվել է գնաճով, ասվում է ԵՏՀ մամուլի ծառայության հաղորդագրության մեջ, փոխանցում է «Սպուտնիկ Արմենիան»:

Հոկտեմբերի արդյունքներով՝ Եվրասիական տնտեսական միության երկրներում տարեկան գնաճը Հայաստանում կազմել է 0,6%, Բելառուսում՝ 5,9%, Ղազախստանում՝ 8,5%, Ղրղզստանում՝ 4,8%, Ռուսաստանում՝ 8,5%:

2023 թվականի դեկտեմբերի համեմատ այս տարվա հոկտեմբերին գնաճի տեմպերի 1,3 տոկոսային կետով դանդաղում է արձանագրվել Ղազախստանում, Ղրղզստանում՝ 2,5 տոկոսային կետով, իսկ Բելառուսում գնաճի 0,1 տոկոսային կետով արագացում է արձանագրվել, 1,1 տոկոսային կետով էլ՝ Ռուսաստանում:

Հաղորդագրության համաձայն՝ սպառողական գների կառուցվածքում գնաճի դանդաղում է նկատվել պարենային ապրանքների գծով Ղազախստանում եւ Ղրղզստանում, ոչ պարենային ապրանքների գծով՝ Հայաստանում, Ղազախստանում, Ղրղզստանում եւ Ռուսաստանում, ծառայությունների գծով ՝Բելառուսում եւ Ղրղզստանում:

«Գների կայունության պահպանմանը նպաստել են ԵԱՏՄ երկրների կառավարությունների եւ կենտրոնական (ազգային) բանկերի կողմից սպառողական գների աճի սահմանափակման ուղղված միջոցառումները», - նշել են մամուլի ծառայությունում:

Գնաճի մակարդակը (սպառողական գների ցուցիչը), համաձայն ԵԱՏՄ մասին պայմանագրի 63-րդ հոդվածի, տնտեսական զարգացման կայունությունը որոշող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներից մեկն է: ԵՏՀ-ն պարբերաբար ԵԱՏՄ երկրներում գնաճի մակարդակի մոնիտորինգ է իրականացնում:

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Նոյեմբերի 18-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում տեղի է ունեցել Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (FREDA) հոգաբարձուների խորհրդի նիստը, որը նախագահել է խորհրդի նախագահ, ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը:

Նիստի մեկնարկին որոշում է կայացվել անկախ մարմնի կողմից FREDA-ի ակտիվների գնահատումն իրականացնելու վերաբերյալ, որի արդյունքների հիման վրա կորոշվի հիմնադրամի հետագա գործունեության հարցը: Նիստի ընթացքում ներկայացվել են հիմնադրամի 2022 եւ 2023 թվականների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ անկախ աուդիտ իրականացնող կազմակերպության պատրաստած ֆինանսական հաշվետվություններն ու աուդիտորական եզրակացությունները:

Քննարկվել են 2023-2025 թթ.-ի ամփոփ բյուջեի եւ պահպանման ծախսերի նախահաշվի նախագծերը, ինչպես նաեւ 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտորական ընկերության մրցույթ հայտարարելու հարցը:

«ՅՈՒՓԵՅ» Գ.

# ՄԻԱՑԵԼ Է «ԻԴՐԱՄ»-Ի ԲԱՑ QR ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ

**Սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած ասուլիսում «Իդրամ» ընկերությունը հայտարարեց իր QR ենթակառուցվածքը բացելու մասին: Նույն օրը հայտարարվեց, որ «Յուփեյ» ընկերությունը միացել է Open QR ենթակառուցվածքին: Այսուհետ 22.500-ից ավելի վաճառակետերում տեղադրված «Իդրամ» QR-ը կարող են իրենց հավելվածներով սքանավորել եւ վճարել նաեւ «Յուփեյ»-ի օգտատերերը:**



«Իդրամ» ընկերության տնօրեն Արսեն Քդենյանը, նախ ողջունելով ենթակառուցվածքին արդեն իսկ միացած գործընկերներին՝ տեղեկացրել է, որ ֆինանսական համակարգը ներկայացնող այլ գործընկերների հետ ընթանում են բանակցություններ, եւ շուտով նրանք նույնպես հնարավորություն կունենան միանալ Իդրամի բաց/open QR-ին: «Այս հնարավորությունը շահավետ է ֆինանսական կազմակերպությունների համար այն առումով, որ իրենց օգտատերերին եւ հաճախորդներին առաջարկում են այլընտրանքային վճարման տարբերակ 22.500-ից ավել վաճառակետերում: Ընդ որում, այդ ընկերությունների օգտատերերը ստիպված չեն ներբեռնել այլ հավելվածներ անհպում QR վճարումներ կատարելու համար», - ասել է Արսեն Քդենյանը:

«Մենք ուրախ ենք միանալ «Իդրամ» ընկերության այս նախաձեռնությանը, հաշվի առնելով մեր ռազմավարությունը, որն ուղղված է Upay էլեկտրոնային դրամապանակի օգտատերերի փորձառության շարունակական բարելավմանը: Արագ եւ անհպում վճարումներն այսօր ժամանակի հրամայականն են դարձել եւ միանալով այս նախագծին՝ մենք եւս մեկ քայլ ենք կատարում՝ մեր հաճախորդներին տրամադրելու արագ եւ հասանելի վճարային լուծումներ: Կարծում եմ՝ «Բաց QR» ենթակառուցվածքի շուրջ համագործակցությունը թույլ կտա նոր վճարային էկոհամակարգ ստեղծել Հայաստանում», - ասել է «Յուփեյ» ընկերության տնօրեն Հասմիկ Գեւորգյանը («Յուփեյ» ընկերությունը հիմնադրվել է Ucom-ի կողմից):

«Իդրամ» ընկերության առանցքային գործընկերների եւ թվային վճարումների նախագծերի բաժնի ղեկավար Ալբերտ Թունյանի խոսքով՝ տեխնիկական տեսանկյունից Իդրամի բաց/open QR-ին միանալու գործընթացը պարզ է. այն իրականացվում է ժամանակակից եւ ստանդարտացված API-ների համակցման միջոցով: «Ենթակառուցվածք ասելով՝ մենք նկատի ունենք ոչ միայն տեխնիկական լուծումը, այսինքն՝ հնարավորությունը, որ այլ բանկերի կամ վճարահաշվարկային կազմակերպությունների օգտատերերն իրենց հավելվածներով կարող են սքանավորել «Իդրամ»-ի QR-ը, մենք նկատի ունենք նաեւ նշված գործընկերների հետ հարաբերությունների, տեխնիկական հարցերի կարգավորման, ինչպես նաեւ հաճախորդների աջակցման մեխանիզմների ստեղծում», - ասել է Ալբերտ Թունյանը:

Այս պահին Իդրամ բաց/open QR-ի ենթակառուցվածքին միացել են Evocabank-ը, Fast Shift-ը, Upay-ը եւ Easy Pay-ը:«Իդրամ»-ի բաց/open QR ենթակառուցվածքին միացած ընկերությունների հետ ստորագրվեցին համագործակցության հուշագրեր, իսկ Հայաստանում գործող բանկերին եւ վճարահաշվարկային կազմակերպություններին «Իդրամ»-ից տեղեկացրին, որ բաց են համագործակցության համար:

*ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ*

ԸՆԹԱՑԻԿ Գ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղը Ազատան համայնքում ունի հանրային վաճառքի համար նախատեսված, 2018 թվականի արտադրության շարժական քարջարդիչ սարքավորում (YD150): Գինը՝ պայմանագրային:

Հեռ.՝ +37499369094 Գեղամ

Էլ. հասցե՝ sinohydro_am_lg@163.com

⇨





## ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԱՄՆ ԱՃԵԼ Է 25 ՏՈԿՈՍՈՎ

Ընթացիկ տարվա հունվար-հոկտեմբերին Հայաստանից ԱՄՆ արտահանումն աճել է 25%-ով՝ կազմելով 50,2 մլն դոլար: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը:

Նա հավելել է, որ Հայաստանից հիմնականում ԱՄՆ են արտահանվել ոսկերչական իրեր, թռչող սարքեր, ալկոհոլային խմիչքներ, ջրեր, ծխախոտ:

«Այնուամենայնիվ, ընդհանուր առեւտրաշրջանառությունը նվազել է 59%-ով, քանի որ ներմուծումն է կտրուկ կրճատվել, մասնավորապես, ԱՄՆ-ից ավտոմեքենաների ներմուծումը կրճատվել 3,5 անգամ կամ 442 մլն դոլարով»,- նշել է նախարարը:

## ԾԱՌԵՐԸ ՆՈՐԵՐՈՎ ԵՆ ՓՈԽԱՐԻՆՎՈՒՄ

Երեւանի քաղաքապետարանի «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը շարունակում է կենսունակությունը կորցրած ծառերը փոխարինել առավել արժեքավոր եւ երկարակյաց ծառերով:

Ծեր բարդիների, թեղիների եւ պտղատու մի քանի ծառերի փոխարեն Ուլնեցի փողոցում ձիակասկ ցեղի պավլիա եւ սովորական տեսակներն են տնկվել:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԳՐԱԿԱՆ ՔՈՉԵՐ»

# ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ. ԱՆԶՈՒԳԱԿԱՆԸ՝ ԵՐԳԻԾԱԳԻՐՆԵՐԻ ՄԵՋ

**19-րդ դարի կարեւորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Հակոբ Պարոնյանը, հայ գրականության ամենից հետաքրքիր եւ տաղանդավոր դեմքերից մեկն է:**



Նոյեմբերի 19-ը գրողի ծննդյան օրն է: Պարոնյանի ստեղծագործությունները ներառված են նաեւ դպրոցական ծրագրային թեմաներում: Դրանք այնպիսի արժեքներ են փոխանցում, որոնց շնորհիվ օգնում են սովորողներին ձեւավորել ճշմարտացի ու ազնիվ արժեհամակարգ, դեռ փոքր տարիքից դաստիարակում են պետականության եւ հասարակության համար պիտանի անձնավորություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է գրողի կյանքից հետաքրքիր դեպքեր:

Հակոբ Պարոնյանը հայ նշանավոր գրողներից մտերիմ է եղել Հովհաննես Թումանյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Վահան Տերյանի եւ այլոց հետ:

Պարոնյանը եւ Ալեքսանդր Շիրվանզադեն շատ մտերիմ էին, եւ երկուսն էլ գրեթե նույն գաղափարների եւ տեսակետների կրողն էին՝ հասարակության մեջ հանդիպող անարդարությունների եւ մշակույթի զարգացման տեսլականների վերաբերյալ: Նրանք համատեղ աշխատել են նաեւ «Բանգյան» խմբակի շրջանակում, որտեղ կիսվել են իրենց գրական եւ հասարակական հայացքներով: Շիրվանզադեն, ով մեծ ազդեցություն ունեցավ հայ արձակի զարգացման գործում, հաճախ էր աջակցում Պարոնյանին, եւ նրանց միջեւ հարաբերությունները ստեղծագործական բարեկամության դրական օրինակ էին:

Շիրվանզադեն ու Պարոնյանը միասին հաճախ էին մասնակցում համաժողովների ու գրական ակումբների քննարկումներին: Մի անգամ, երբ նրանք նստած էին մի բարերարի տանը եւ քննարկում էին գրական մի նորություն, որոշ կտրուկ հայացքներ էին հայտնվում: Շիրվանզադեն, ով սովորաբար հարգանքով էր մոտենում գրականության նրբություններին, Պարոնյանի դիտողությունները նկատելով՝ մի փոքր հուզվեց: Նա փորձում էր մխիթարել Պարոնյանին՝ ասելով, որ թեեւ ծաղրն ու կատակերգությունը գրական ասպարեզում կարեւոր են, բայց միաժամանակ պետք է պահպանել նաեւ պատմական ու սոցիալական խոր ակնարկները:

Այդ քննարկման ընթացքում Պարոնյանը, ինչպես սովորություն ուներ, սրել էր իրավիճակը, երբ խոսել էր հասարակական մոլորությունների ու անարդարությունների մասին:

«Հիմա, Ալեքսանդր, ես էլ քեզ եմ դիմում. գուցե այս ամենը մի քիչ խոշոր չափով անդրադառնա, իսկապես, կարծես, թե մենք բոլորս մեր ժամանակի շահագործվող ու խաբված մարդիկ ենք: Ի վերջո, ո՞վ է մնում առանց սխալների», - ասում էր Պարոնյանը:

Շիրվանզադեն պատասխանեց մի համեստ ժպիտով՝ ըմբռնելով, որ Պարոնյանի սարկազմը եւ հակասական մոտեցումը հենց այդ նույն շեղումների ու «իրավունքների» վերանայման փորձ էր:

Ինչ վերաբերում է Պարոնյանի եւ Թումանյանի մտերմությանը, ապա Հակոբ Պարոնյանն ու Հովհաննես Թումանյանը, չնայած որ ունեցել են տարբերություններ իրենց գրական մոտեցումներում, սերտ ու մտերիմ են եղել: Թումանյանը, ով ճանաչում էր Պարոնյանի սուր լեզուն ու սարկազմը, հավանություն էր տալիս նրա աշխատություններին: Նրանք միասին բազմաթիվ գրական քննարկումների ու հանդիպումների են մասնակցել, եւ Թումանյանը մշտապես գնահատել է Պարոնյանի բառախաղային վարպետությունը, հումորն ու տաղանդը:

Տերյան եւ Պարոնյան հարաբերությունները եւս հետաքրքիր են:

Վահան Տերյանն ու Հակոբ Պարոնյանը մի քանի անգամ միասին այցելել են Երեւան՝ մասնակցելու հասարակական ու գրական միջոցառումներին: Նրանք բավականին լավ ընկերներ էին եւ, ըստ որոշ պատմությունների, երբ Տերյանը ժամանել է Երեւան, Պարոնյանը նրան ցուցադրել է քաղաքի «լավագույն հատվածները»՝ ծաղրելով տեղական իշխանությունների ու «բարձր կարգի» հասարակական դեմքերի կենցաղը:

Մի անգամ, երբ նրանք անցնում էին Երեւանի ամենաhին փողոցներից մեկով, Պարոնյանը ասաց՝ «Երեւանը այսքան գեղեցիկ ու նույնքան էլ՝ անբարեխիղճ, խորամանկ ու պոռնիկ քաղաք է»: Տերյանը՝ իր բնույթով ավելի զգայական եւ ռոմանտիկ, այնքան էլ համաձայն չէր այդ կարծիքին, բայց չկարողացավ չժպտալ Պարոնյանի սուր ձեւակերպումից:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱԱ-ԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

# «ՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՑԱՎԱԼԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ»

**Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ նոյեմբերի 18-23-ը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի է ունենալու բանակայինների ըմբշամարտի աշխարհի առաջնությունը, որին մասնակցության հայտ է ներկայացրել 40 երկիր, այդ թվում եւ Թուրքիան:**

Հայաստանը եւս ներկայացված է լինելու առաջնությունում: Սակայն, եթե ի սկզբանե ՀՀ-ից մասնակցության հայտ ներկայացրած մարզիկները գործող չեմպիոններն էին, ապա այժմ, պարզվում է, որ նրանց թույլ չեն տվել մասնակցել առաջնությանը՝ առանց որեւէ պատճառաբանության:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ թույլ չեն տվել առաջնությանը մասնակցել՝ ներկա պահին ժամկետային զինծառայողներ աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Մալխաս Ամոյանին, Եվրոպայի բազմակի չեմպիոն, աշխարհի բրոնզե մեդալակիր Արսեն Հարությունյանին, Եվրոպայի չեմպիոններ Արման Անդրեասյանին եւ Վազգեն Թեւանյանին, աշխարհի երիտասարդների չեմպիոն Վիգեն Նազարյանին, բանակայինների աշխարհի չեմպիոն Գեւորգ Թադեւոսյանին, Եվրոպայի բրոնզե մեդալակիր Մանվել Խնձրցյանին, Եվրոպայի երիտասարդների մրցանակակիր Կնյազ Իբոյանին: Արդյունքում՝ Հայաստանը տվյալ առաջնությունում ներկայացնելու են յուրաքանչյուր քաշի «երրորդ համարները», այլ ոչ չեմպիոնները: Մինչդեռ Թուրքիան առաջնությանը մասնակցելու է բավականին տպավորիչ կազմով, իր, այսպես կոչված, «առաջին համարներով»՝ հավաքականում ունենալով աշխարհի ու Եվրոպայի չեմպիոններ, ինչը վերոնշյալ հայ ըմբշամարտիկների բացակայության պայմաններում, երաշխավորելու է նրանց հաղթանակը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց մարզիչ Արմեն Բաբալյանի հետ՝ հասկանալու, թե ինչն է նման քայլի պատճառը: Վերջինս ասաց, որ չի կարող «Ժողովուրդ» օրաթերթի հարցին պատասխանել:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել նաեւ մարզիչ Արայիկ Բախդադյանի հետ, սակայն զանգերը մնացին անպատասխան:

Աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Մալխաս Ամոյանը անդրադարձել է թեմային՝ նշելով. «Մեր թիմը պատրաստ էր մասնակցելու Երեւանում կայանալիք Բանակայինների ընբշամարտի աշխարհի առաջնությանը, սակայն մեզ համար անհայտ եւ անհասկանալի պատճառներով ԲԿՄԱ-ի մեր թիմի որոշ մարզիկներ զրկվել են այդ հնարավորությունից: Նման վերաբերմունքը ցավալի ազդեցություն ունի մեր թիմի վրա», - գրել է Ամոյանը:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՊՈՐՏՈՒԳԱԼԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ

Հայաստանը ներկայացնող շախմատիստներ Կարեն Գրիգորյանը եւ Էլինա Դանիելյանը հաղթել են միջազգային մրցաշարում:

Գրոսմայստեր Կարեն Գրիգորյանը Պորտուգալիայում անցկացված «XVIII Torneio Internacional Figueira da Foz - Sabir Ali» մրցաշարում 9 հնարավորից վաստակեց 7.5 միավոր եւ դարձավ մրցաշարի հաղթող:

Մրցաշարին մասնակցում էր նաեւ գրոսմայստեր Էլինա Դանիելյանը, ով վաստակեց 6 միավոր եւ զբաղեցրեց 1-ին հորիզոնականը կանանց պայքարում:

Գրոսմայստեր Կարեն Գրիգորյանը Պորտուգալիայում անցկացված «XVIII Torneio Internacional Figueira da Foz - Sabir Ali» մրցաշարում 9 հնարավորից վաստակեց 7.5 միավոր եւ դարձավ մրցաշարի հաղթող:

Մրցաշարին մասնակցում էր նաեւ գրոսմայստեր Էլինա Դանիելյանը, ով վաստակեց 6 միավոր եւ զբաղեցրեց 1-ին հորիզոնականը կանանց պայքարում:

## ՀԱՅ ԸՄԲԻՇՆԵՐԻ ԱՐՋԱԳԱՆՔԸ

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ նոյեմբերի 18-23-ը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի է ունենալու բանակայինների ըմբշամարտի աշխարհի առաջնությունը, որին մասնակցության հայտ է ներկայացրել 40 երկիր, այդ թվում եւ Թուրքիան:

Ազատ ոճի ըմբիշ Արսեն Հարությունյանը ֆեյսբուքյան իր էջում հանդես է եկել հայտարարությամբ՝ տեղեկացնելով, որ մեր առաջատար ըմբիշներին, ովքեր մեծ հնարավորություն ունեին չեմպիոն դառնալու, պարզապես դուրս են հանել մրցաշարի կազմից:

«Վերջին ամիսների ընթացքում մենք անդադար աշխատել ենք՝ պատրաստվելով մեր երկրում անցկացվող «Բանակային աշխարհի առաջնության»-ը: Մեր թիմը մեծ ջանքեր է ներդրել՝ հասնելու լավագույն մարզավիճակին: Մենք խստորեն հետեւել ենք դիետային, հաղթահարել ֆիզիկական ու հոգեբանական բարդություններ՝ մեր երկրի պատիվը բարձր պահելու նպատակով:

Սակայն օրեր առաջ մեզ տեղեկացրին, որ չենք կարող մասնակցել առաջնությանը մեր ուժեղագույն կազմով: Ավելի ցավալի է, որ մեր առաջատար ըմբիշներին՝ այն մարզիկներին, որոնք մեծ հնարավորություն ունեին չեմպիոն դառնալու, պարզապես դուրս են հանել մրցաշարի կազմից: Մեզ ոչ մի հստակ պատճառաբանություն չեն ներկայացրել, թե ինչու ենք նման որոշման առջեւ կանգնել: Այս իրավիճակը մեզ համար չափազանց դժվար է՝ հոգեբանորեն եւ ֆիզիկապես: Այն աշխատանքը, որ կատարել ենք, այն զոհողությունները, որ արել ենք, մնում են անարդյունք», - գրել է Արսեն Հարությունյանը:

Եվրոպայի երիտասարդների մրցանակակիր Կնյազ Իբոյանն էլ նշել է, որ հայ ըմբիշները պատրաստ են երկրի պատիվը բարձր պահել, սակայն այդ հարցում աջակցության փոխարեն իրենց անորոշություն են «մատուցում»:

● *Նոյեմբերի 23-ին՝ ժամը 17:00-ին, Լուսիկ Ագուլեցու թանգարանում կցուցադրվի «Տորք Անգեղ եւ Հայկանուշ գեղեցիկ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 5.000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ կարգով է որոշվում երեխայի նկատմամբ հայրությունը:**

*Լուսինե Կիրակոսյան (42 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ ներկայացնում ենք հայրության ճանաչման պետական գրանցման հիմքերը՝

1) երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող մոր եւ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի համատեղ հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է հայտարարություն ներկայացնող անձից,

2) ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում մոր հետ ամուսնության մեջ չգտնվող՝ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է իրենից,

3) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը:

Եթե երեխայի ծնունդը գրանցել է օտարերկրյա պետությունը, ապա հայրության ճանաչման պետական գրանցումը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետությունում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Օտարերկրյա պետության գրանցած ծննդյան ակտային գրանցման հիման վրա կատարված հայրության ճանաչման պետական գրանցման դեպքում դիմողին տրամադրվում է հայրության ճանաչման վկայական, եւ կատարված հայրության ճանաչման պետական գրանցման մասին հաղորդվում է երեխայի ծննդի ակտային գրանցման վայր՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:

*ՀՀ արդարադատության նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հայրության որոշման պետական գրանցումը կատարում է գործակալությունը: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ում է նշանակվում կերակրողին կորցնելու կենսաթոշակը եւ որ դեպքերում:**

*Կիմա Բեգլարյան (55 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** (Սկիզբը՝ նախորդ համարում) Կերակրողին կորցնելու զինվորական կենսաթոշակ նշանակվում է զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի վերը նշված անդամներին՝ անկախ զինծառայողի զոհվելու (մահանալու) պատճառից, անցած ժամանակաշրջանից եւ ծառայության տեւողությունից: Կերակրողին կորցնելու զինվորական կենսաթոշակ նշանակվում է նաեւ.

1) զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված եւ, անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողի ընտանիքի անդամների վրա, որի մահվան պատճառը զինծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ ծագած հիվանդությունը,

2) ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաեւ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամների վրա:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



Ռուսական արվեստի եւ Վանաձորի կերպարվեստի թանգարանները, կարեւորելով միջթանգարանային համագործակցությունը, Վանաձորում արվեստասերներին են ներկայացրել Ստանիսլավ Շչեգլովի «Սամարա. նահանգային մայրաքաղաքի խաչմերուկ» ցուցահանդեսը: Ցուցադրության հիմքում են եղել «Հին Սամարա» շարքի օֆորտները, որոնք նվիրված են հեղինակի հայրենի քաղաքի ճարտարապետական հուշարձաններին:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել




**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | | | |
|---|---|---|---|---|
| Շիրակ | -2 - 6<br>+ 4 + 8 | | Արարատ | -1 + 2<br>+13 + 15 |
| Կոտայքի լեռներ | -1 - 5<br>+ 4 + 9 | | Արմավիր | -2 + 2<br>+13 + 15 |
| Կոտայքի նախալեռներ | -1 + 3<br>+9 + 12 | | Վայոց ձորի լեռներ | -1 + 2<br>+ 3 + 6 |
| Գեղարքունիք | -3 -7<br>+ 5 + 8 | | Վայոց ձորի նախալեռներ | -1 + 2<br>+12 + 14 |
| Լոռի | -1 - 5<br>+10 + 13 | | Սյունիքի հովիտներ | -1 + 5<br>+ 8 + 12 |
| Տավուշ | - 2 + 3<br>+12 + 14 | | Սյունիքի նախալեռներ | +1 + 5<br>+12 + 16 |
| Արագածոտնի լեռներ | - 2 - 6<br>+ 2 + 7 | | ԼՂՀ | 0 + 4<br>+11 + 14 |
| Արագածոտնի նախալեռներ | -2 + 2<br>+ 8 + 13 | | Երեւան | + 6 + 8<br>+ 11 + 13 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*